ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԱՊՁԲ-20-20/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 09.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից, և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 20.12.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-20/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 4,800,000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԻՁ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Օրբելի
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ԱրմՍվիսԲանկ ՓԲԸ
Հ/Հ 900011024537	ՀՀ 25000103329000100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 08209436
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-20/2-1 ծածկագրով
պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը՝ 2020թ.-ին, ընդ որում 2-րդ եռամսյակ
1	էլեկտրատեխնիկական սարքեր /30 ԿՎՏ հզորության էլեկտրական/	հատ	2	2,400,000	4,800,000	2

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-20/2-1 ծածկագրով
պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝								
				ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	էլեկտրատեխնիկական սարքեր /30 ԿՎՏ հզորության էլեկտրական/	31731100/501	4,800,000	4,800,000	4,800,000	4,800,000	4,800,000	4,800,000	4,800,000	4,800,000	4,800,000	4,800,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ
Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՆԻԿՈ-ՏԵԿ» ՍՊԸ Տնօրեն
Մ. ԵՂԱՉԱՏՐՅԱՆ